№ 91 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՅԻՍԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՅԻՍԻ № 91

ՄՇԱԿ

ՀԱՍՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում կրվում են խմբագրատները.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS. Rédaction du journal „MSHAK“.
Կովկասից դուրս տպվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մայիսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 7 ռուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակատրոշմ:

Այսօր, երեքշաբթի, Մայիսի 3-ին
ԲԱԼԱՍԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ԽՕՋԱՄԻՐԵԱՆԻ
մահվան քառասունքին, առաւօտեան ժամը 11-ին, Զգբաշէնի եկեղեցում կը կատարվի ՀՈԳՆՀԱՆԳԻՍՏ, որի մասին Սօֆիա Կարլօվնա և Բօսսոմ Արտէմիեվիչ ՍԻԼԻԿԵԱՆՆԵՐԸ զաւակների հետ միասին և Աննա Կարլօվնա ՆԱԼԲԱՆԴԵԱՆԸ յայտնում են ազգականներին և ծանօթներին։
455. 1—1

ՊԱՆԻՈՑԿԱՅԱՅԻ „ԻԼԻԻԶԻՕՆ“ ԹԱՏՐՕՆՈՒՄ
Այսօր ծրագրից դուրս ցոյց կը տրվի սեփական լուսանկարած պատկեր,
հանված ապրիլի 30-ին
Ա. Յ. ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Պատկերների նոր շքեղ ծրագիր։
1—1

ДЕШЕВО
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
50—15 283. առ. (Կ.Ս.)

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՈԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
Բանանումներ Թիֆլիսում, Դօր. պր. 21, տուն Արմխոտի. Ընկ., տէլէֆոն № 355.
Պահեստում միշտ կան մեծ բանակութիւնամբ ընտիր պաստառներ ամենավերջին ոճով
ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ
8 կոպ. սկսած մինչեւ 6 ռ. իւրաքանչիւր ռուլօն։
Ունի պահեստներ Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում։
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԶՐԻ։
(Կ. Շ.) առ. 207. 50—15

ՕԴՕԼ
Безспорно лучшее полосканіе
Առաջնակարգ դիմանականների միանգամայն կարծիքով Օդօլը կատարելապէս համապատասխանում է առողջապահութեան բոլոր պահանջներին, հետեւաբար և համարվում է ատամները մաքրող միջոցներից ամենալաւը։
առ. (М.74170/74189) 233. 1—1

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՎԱՒԵՐԱԹՈՒՂԹ

Ներկայ մայիսին նշանակված է այն յատուկ յանձնաժողովի զեկուցումը, որը պէտք է քննէր ամուսնացողների բժշկական քննութեան խնդիրը և ներկայացնէր Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան ընդհանուր ժողովին։

Այդ խնդիրը ծագեց Բժշկական ընկերութեան մէջ Էջմիածնի սինօդի այն կարգադրութեան առիթով, որ որոշ սահմանափակումներ էր դնում ամուսնացողների համար առողջապահական նավիայի հասարակութեան շրջանները։ Մի երկու փորձ էլ գործադրված է Ամերիկայի Միացեալ-Պետութիւնների մէջ։

Թիֆլիսի Բժշկական Ընկերութեան մէջ այդ հարցի քննութիւնը առաջ բերեց հետաքրքրութիւն և վիճաբանութիւն։ Ընտրվեց մի յանձնաժողով, որը պէտք է հանդամանօրէն ուսումնասիրէր խնդիրը, մշակէր և ձեւակերպէր նրան՝ ներկայացնելու Ընկերութեան ընդհանուր ժողովին։

Անշուշտ, շատ հետաքրքրական էր ունենալ նաև մի տեսութիւն հայ հոգեւորականութեան արած դիտողութիւնների մասին այդ խնդրի վերաբերութեամբ։ Մի քանի տարվայ ունեցած փորձը կարող է ներկայացնել գործնական ցուցումների մի շարան թէ դրական և թէ բացասական բնաւորութեամբ։

Նոյնպէս մեր բժիշկները, որոնք դժուարանում էին առաջ կարծիքներ յայտնել սինօդի կարգադրութեան առիթով, այժմ մի քանի տարվայ դիտողութիւնների հիման վրա կարող էին աւելի որոշակի խօսել և կարծիքներ յայտնել։

Անկասկած, ցաւալի կը լինի, եթէ չը գտնվեն անհատներ, որոնք քննութեան առնեն եղած փորձերը և ներկայացնեն հասարակութեան իրանց ուսումնասիրութիւնների արդիւնքները։

Եթէ այդ չէ արված, պէտք է անել գոնէ այժմ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)
30 ապրիլի

Պետերբուրգ.—Պետական Խորհրդին տրված հրամանով՝ Խորհրդի անդամ Տրէպովը, համաձայն խնդրագրի, արձակվում պաշտօնից։

Պետական Դումայի ուսումնարանական մասնաժողովը ցանկալի գտաւ այն օրէնսդրական առաջադրութիւնը, որի համաձայն իրաւունք է տրվելու բէալական և առևտրական դպրոցները, հոգեւոր սեմինարիաները, կադէտների կօրպուսները և այլ միջնակարգ դպրոցներն աւարտողներին մտնել բարձր կրթական հաստատութիւնները։

Մոսկվա.—Համալսարանի ռեկտոր ընտրվեց ռուսաց պատմութեան պրոֆ. Լիւբավսկի, ռեկտորի օգնական Լէյստ, պրորեկտոր—Էլիստրատով։

Տօկիօ.—Կացուրան ճաշ տուեց ժուրնալիստներին, խնդրելով աջակցել աղքատների համար կնքվող 20 միլիոն պետական ֆոնդ հիմնելու խնդրին։

Հօմ.—«Կօրրես. դ'Իտալիան» հերքում է պապի առողջութեան մասին տարածված յուզալի լուրերը։

Անտվերպէն.—Ուրգանի ժամանակ Կոնգօ գետի վրա ջրասոյզ եղան երկու նաւակ 30 տեղացիներով։

Աթէնք.—Պալատն ընդունեց պետական խորհուրդը վերականգնելու օրինագիծը։

1 մայիսի

Պոտսդամ.—Կայսրուհին պրինցուհի Վիկտորիա-Լուիզայի հետ միասին մեկնեց Վեզել, որտեղից կայսրի հետ միասին կը մեկնեն Լոնդոն թագադրութեան հանդէսին։

Պէկին.—Ռուսաց դեսպանը Դուչկովի հետ միասին այսօր ունկնդրութեան ընդունվեցին իշխան խնամակալի մօտ։

Նիւ-Յորկ.—Մէկսիկանական սահմանագլխից ստացված տեղեկութիւնների համաձայն, կառավարական զօրքերը մաքրել են Կանանէան, որը յետոյ դարձեալ ընկել է ապստամբների ձեռքը։

Վաշինգտոն.—Միջնորդ դատարանի անգլօ-ամերիկական պայմանագրի առաջին նախագիծը կազմվեց։

Հոնանէսբուրգ.—Քաղաքային էլեքտրաքարշի ծառայողները գործադուլ արին։ Գործադուլները փորձեցին յարձակվել էլեքտրական կայարանի վրա և ոստիկանութեան վրա քարեր նետեցին։ Կատարվեցին բազմաթիւ ձերբակալութիւններ։ Բաց երկնքի տակ ժողովվել արդելված է։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՕԿԿՈՅՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)
30 ապրիլի

Պարիզ.—Ֆէցից հաղորդում են, որ քաղաքի վրա յարձակում գործված ժամանակ խուժանը քաղաքի մէջ անկարգութիւններ և քարուքանդ արեց խանութները։ Կան սպանվածներ։

Ապստամբները պահանջում են հեռացնել իշխանութիւնից Մուլայ-Հաֆիդին և խոստանում են ձեռք չը տալ օտարազգիներին։

Պարիզ.—Մինիստրների խորհրդի նիստում արտաքին գործերի մինիստրը յայտնեց, որ Ֆէցից ֆրանսիական հիւպատոսը տեղեկացնում է, թէ դրութիւնը քաղաքում յուզալի է. ռազմաթերքները ուտելիքը սպառվում են. սուլթանը մի նամակով թախանձում է օգնութիւն։ Տեղացիները ուրախ են, որ ֆրանսիացիները պատրաստվում են միջամտել։ Մինիստրների խորհուրդը վճռեց կրկնել իր կարգադրութիւնը գեներալ Մուանիէին՝ շտապով օժանդակ գունդ ուղարկել Ֆէցն ազատելու համար։

Մուանիէն ապրիլի 28-ից հեռագրում է, որ թուրքիկ խումբը մեկնեց Էլկիդրից, ընդհարում ունեցաւ ըէնդասէն ցեղի հեծելազօրի հետ և շարունակում է առաջ գնալ։

Մադրիդ.—Դերմանական և ֆրանսիական դեսպանները Կանալէխասի հետ ունեցան երկարատև խօսակցութիւն։

1 մայիսի

Պարիզ.—Էլկնիարից հաղորդում են, որ ապստամբների յարձակումները ֆրանսիական զօրքերի վրա շարունակվում են։ Յարձակումները յետ են մղվում թշնամու կորուստներով։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Դորձ.)
30 ապրիլի

Կ. Պոլիս.—Պալատը ընդունեց հասարակական աշխատանքների մինիստրութեան բիւջէն, որ առաջ բերեց շատ կշտամբանքներ։

Ցէտինէի.—Տուրքութ-փաշայի թուղթերն ուղիղ տուեց ալբանական պատգամաւորներին խորհրդակցութեան դուռ մարվել։ Դրուդում։ Ալբանացիները չեն վստահանում Տուրքութին։ Նախատեսվում է արիւնալի ելք։

Ուսկիւբ.—Ապստամբութիւնը ընդգրկել է Զերնօգորիային մերձ ընկած բոլոր սահմանակից տեղերը։ Պրիզրէնում ազգաբնակութիւնը հանդիստ է, բայց գործում են ալբանական հրոսակախմբերը։ Բերանի շրջանում գործում են սերբ հրոսակները։

Թէհրան.—Մէջլիսում դէմ են Սարդար-Ասադին մինիստր նշանակելուն։

Եկան ամերիկացի երեք ֆինանսական խորհրդատուներ։

Բերլին.—«Պոստ» լրագրին հեռագրում են Հռօմից, որ հանրապետական պատգամաւորների մի խումբ պալատին առաջարկեց անյապաղ հարց բարձրացնել այն մասին, որպէսզի մեծ պետութիւնները միահամուռ ջանքերով իրականացնել սան Բերլինի դաշնագրի 26-րդ յօդուածը Ալբանիայի դրութեան վերաբերութեամբ, այսինքն որպէսզի առանձին սահմանափակիչ կանոն մըշակվի։

1 մայիսի

Մոնաստիր.—«Մ. և Ա.» տեղական կոմիտէն Սալոնիկի գլխաւոր կոմիտէից կարգադրութիւն ստացաւ կազմակերպելու օսմանեան եղբայրութիւններ ոչ-մահմէդական ժողովուրդների գաղտնի կազմակերպութիւններին հաղորդելու համար։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պոլիս, 22 ապրիլ

Ազգ. կեանքի խաղաղ ընթացքը դարձեալ փոթորկելու վտանգին տակն է, վտանգի երկամսեայ պայմանաժամը լրացած ըլլալով ազգ. ժողովը իր գումարումներուն պիտի սկսի։ Մինչև հիմա կատարուած ընտրութիւններու մէջ դեռ ազատականները կորուսին միայն մէկ աթոռ։ Կարնոյ երեսփոխանը հակառակ ակնկալութեան վերընտրուեցաւ, դաշնակցականաց ազդեցութեամբը։ Կարին միակ շրջանն է, ուր դաշնակցականները իւրացուցած են բոլոր ազգային գործերը և իրենք իրանց ուզածին պէս կը վարին։

Գաւառական ժողովի առենապետն է Սանասարեան վարժարանի տնօրէն Ատուռ-ծատուր Խաչատուրեան, որ ամուսնացած է վերջերս Եղիշէ Թոփչեանի այրիին հետ։

Սանասարեան վարժարանը իր ուսուցչական կազմով և ուսանողութեամբ մեծաքանակ դրամ ի զուր կը վատնուի պատրաստելու համար փչացած սերունդ մը։

Այս տեսակ շղթայեալ միջավայրի մը մէջ բնական է, որ կուսակցական կեդրոնին հրահանգը կէտ առ կէտ գործադրուէր և նախորդ երեսփոխանը վերընտրուէր, առանց նկատի առնելու իր ունեցած արժանիքները։

Եղիպտոս վերընտրեց իր երեսփոխանը, Վահան Թէքէեան, որ իրաւամբ կարեւոր դեր մը կատարած էր, նախորդ շրջանին, թէ իբր ատենապետ և թէ իբր գլխաւոր սատար կեդրոնի խմբակցութեան կազմակերպութեանը։

Կ. Պոլսոյ թաղերէն Օրթագիւղ վերընտրեց իր երկու երեսփոխանները, երկուքն ալ անգամ կեդրոնին։ Իսկ Խասգիւղ վերընտրեց իր երեսփոխանները, այս անգամ փոխանակ 4-ին միայն 3 անձ ընտրելով, քանի որ նոր բաշխման համաձայն մէկ երեսփոխան պակաս տալու պարտաւորուած էր։ Ընտրուածներէն մին, Պետրոս Խօրասանճեան, կը պատկանի կեդրոնի խմբակցութեան և նախագահն է այդ կուսակցութեան, իսկ միւս երկուքը, Պետրոս Հալաճեան և Սմբատ Քեսթիպեան, ազատական են։

Խասգիւղի ընտրութեան այս արդիւնքը բաւական տարօրինակ է և ուրիշ հոգեբանութեան մը արտայայտութիւնը։

Խասգիւղին գաղափարի յաղթանակը չէ, որ հետապնդած է, այլ մամոնայի։ Պետրոս Հալաճեանը Խասգիւղի համար հանք մըն է։ Իր երեսփոխանութիւնը շատ ածան չէ, որ կը ծախեն իրեն ազգատիպ դպրոցին համար դրամ քաշելով իրմէ։ Ուրիշ ոմ պիտի ընտրէին՝ կարենալու համար գտնել այս տեսակ հանք մը։ Այդ նկատումով՝ չէին կրնար նաև Հալաճեանէ յանձնարարեալ Քեսթիպեանն ալ մէկ կողմ թողուլ։

Ահա գաղտնիքը այդ խառնակ ընտրութեան, որուն ներքին կողմը առանց ուսումնասիրելու կարելի չէր հասկնալ Խասգիւղի թաղեցւոց հակումները։

Այս քանի մը ընտրութիւններէն զատ, կայ նաև կատարուած՝ եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնը։ Դժբաղդաբար այս ընտրութեան արդիւնքը զայրացուցիչ և ըմբոստացուցիչ է։ Ազգային ժողովը առէջ առաջ բեկանած էր ընտրութիւնը Գէորգ եպ. Երէցեանի, իբր դատապարտեալ։ Հապա՛ւմար ժողովը վերջին ընտրութեան ատեն, քանի մը կաշառակեր քահանաներու թեկնածութեամբ, բացարձակ առաւելութեամբ դարձեալ զինքը երեսփոխան ընտրած է։

Այս ընտրութիւնը երկու նշանակութիւն ունի և երկուքն ալ պատուաբեր չեն կրերին համար։

Համագումար ժողովը ազգային ժողովին դատապարտեալ մը վերընտրելով, առանց նկատի առնելու ազգային վերին մարմնոյն հեղինակութիւնը, տեսակ մը ըմբոստութիւն ցոյց կուտայ աշխարհիկ իշխանութեան դէմ, խրամ կը բանայ աշխարհականաց և եկեղեցականաց միջև և զօրաւոր զէնք մը կուտայ հակակեդրոնական պայքարը բացողներուն ձեռքը, որոնք իրաւունք կը ստանան, լատինական ըմբռնումով մը աշխարհական իշխանութենէն ինքզինքն անկախ, և անոր ազդեցութենէն զերծ համարող կղերը հալածելու։

Երկրորդ՝ գողութեամբ և զազրելի անբարոյականութիւններով ազգ. ժողովէն և հանրային կարծիքէն դատապարտուած եկեղեցական մը միահամուռ երեսփոխան ընտրելով կղերը ցոյց կուտայ, թէ իր ամբողջութեան մէջ անբարոյացած և ապականած է։ Գողերու, զեղծարարներու, անբարոյականներու պաշտպաններն՝ իրենք ալ նոյն աստիճանի անբարոյականներ են, և զանոնք քաջալերելով ցոյց տուած կըլլան իրենց համամտութիւնն անոնց դատապարտելի գործունէութեան և իրենց ալ նոյնքան անբարոյացած և ապականուած ըլլալուն, և հաւանական է որ ինքն ալ առիթը ներկայա-

ցած ատեն ազգէն դատապարտուած այդ արարքները պիտի գործէին առանց ոևէ խղճահարութեան։

Ասիկա, հաւատացէք որ, մարսելի չէ։ Կեդրոնի կուսակցութիւնը և «ազատականները» այս խնդրոյն մէջ համամիտ ըլլալ կը թուին, և շատ հաւանական է, որ այս ընտրութիւնը ամբողջովին բեկանուի և նոր ընտրութեան հրահանգ տրուի։ Ուրեմն հաւանական է, որ հակակշիռը շարժումով մը կատարուի բացումը ազգ. ժողովին։ Ասիկա շահեկան դաս մը պիտի ըլլայ եկեղեցականաց, որ տեսակ մը արհամարհական դիրք բռնելու միտում ցոյց կուտան աշխարհականաց դէմ, ինքզինքին անոնց հրամայողութենէն ազատ համարելով։

Շաբայ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Շաբաթ օր, ապրիլի 30-ին, կայացաւ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան ընդհանուր ժողովը իշխան Պ. Գրուզինսկիի նախագահութեամբ։

Պ. Վինոգրադով-Նիկիտին կարդաց մի զեկուցում թռչունների մասին և ցոյց տուաց, որ նրանց մեծագոյն մասը կերակրվում է միջատներով և այդպիսով մեծ օգուտ է հասցնում մարդկանց, ոչնչացնելով տնտեսութեան թշնամիներին։

Ի. Քուլթաթելաձէ կարդաց մի զեկուցում, որով ընդգծեց շերամապահական մի յատուկ բարձր ատեան կամ կոմիտէ ունենալու կարևորութիւնը։

Ընդհանուր ժողովը ընտրեց մի յանձնաժողով խնդրի ուսումնասիրութեան համար։

Ս. Քալանթար կարդաց դասախօսութիւն «Բարձրագոյն դպրոցի մասին Կովկասում»։

Ընդհանուր ժողովը համակրութիւն յայտնեց առաջարկին, որոշեց այդ մասին տեղեկացնել Կովկասեան Փոխարքային և այն յատուկ համալսարանական յանձնաժողովին, որ ներկայումս նիստեր ունի Պետերբուրգում Կասսոյի նախագահութեամբ։

Ս. Քալանթարի զեկուցումը տպվում է «Մշակի» այսօրվայ բանասիրականում։

Ն. Տարատինով, հաղորդելով որ բամբակի ցանքսերի տարածութիւնը աւելացել է այս տարի մեծ չափով, ապացուցանում էր, որ մի քանի շրջաններում բամբակագործները կը վնասվեն, որովհետև աւելի ցանքս են արել, քան ունեն ջուր ոռոգման և բանուոր մշակութեան համար։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ապրիլի 30-ի երեկոյեան տեղի ունեցաւ Ժողովրդական Համալսարանի Նորընտիր վարչութեան առաջին ժողովը։ Նախ քան օրակարգի հարցերին անցնելը Նախագահ Վ. Բցխիլաձէն ժողովին ծանօթացնելով վարչութեան ունեցած գործունէութեան հետ և ընդհանուր տեղեկութիւն տալով Թիֆլիսի Ժողովրդական Համալսարանի դրութեան և զանազան արգելութիւնների մասին, որպէս գլխաւոր խոչընդոտների Ընկերութեան գործունէութեան առաջադիմելուն, առաջարկեց նորընտիր վարչութեանը, որպէսզի վերջինս միահամուռ և համերաշխ գործունէութեամբ նուիրվի այդ հանգամանքի գործի առաջադիմութեան։

Օրակարգի հարցերից առաջին հերթում դրված էր պաշտօնական անձանց ընտրութիւնը։ Նախագահ, քարտուղար և գանձապահ։ Ժողովը օգտուէտ համարեց այդ ընտրութիւնը թողնել առաջիկայ հերթական նիստին։ Այնուհետև խորհրդակցութիւնը վերաբերում էր այն բանին, թէ ինչ միջոցներով օգնութեան գալ վարչութեան դա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(Զեկուցում Ալ. Քալանթարի)

I

Տասնեօթ տարի սրանից առաջ, 1894 թուականին, երբ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը հարց յարուցեց բարձրագոյն դպրոց բանալու մասին Թիֆլիսում, ես պատիւ ունեցայ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ շօշափել նոյն հարցը։ Ընկերութիւնը մեծ համակրութեամբ վերաբերվեց հարցին և նրա քննութեան համար ընտրեց յատուկ յանձնաժողով։ Օգտվելով այն հանգամանքից, որ նոյն թուին երկրագործութեան մինիստր Ա. Երմօլով այցելեց Թիֆլիս, Ընկերութիւնը յատուկ ներկայացուցիչների միջոցով դիմեց նրան, պարզելով իր խնդրած բարձրագոյն դպրոցի հիմունքները։

Այնուհետև եկան այնպիսի տարիներ, երբ այդ տեսակ հարցերի յատուցանելը չէր գտնում պաշտպանութիւն և աջակցութիւն այն շրջանների կողմից, որոնցից կախված էր բարձրագոյն դպրոցի հիմնադրութեան խնդրի նպաստաւոր լուծումը։

Այժմ, երբ թուացել է բացասական և անտարբեր վերաբերմունքը դէպի գիտութիւնների բարձրագոյն տերմինարանի հիմնադրութեան խնդիրը, երբ մեր երկրի բարձր իշխանութիւնը վերաբերվում է հարցին սրտագին և համակրութեամբ և մայրաքաղաքի ձեռնհաս շրջանները սկզբունքով ընդունելի համարեցին նրա քննութիւնը, այժմ նպատակայարմար է և ցանկալի, որ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը նորից խօսի և միացնի իր ձայնը Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան խնդիրքին՝ հիմնելու բարձրագոյն դպրոց Թիֆլիսում։

II

Կովկասեան համալսարանը անհրաժեշտութիւն է մեր երկրի համար, անհրաժեշտութիւն է պետական, անհրաժեշտութիւն է կուլտուր-պատմական։

Կովկասեան համալսարանը կոչված է կեանքի հրաւիրելու մեր երկրի մտաւոր և կուլտուրական ոյժերը և գիտական հետախուզութիւնների համար բանալու մի երկիր, որ անբաղդատելի և զարմանալի կերպով ճոխ է բնապատմական, աղգագրական, լեզուաբանական և կուլտուր-պատմական նիւթերով։ Եթէ Կովկասեան համալսարանը իր գոյութեան առաջին տարիները հանդէս գայ ոչ բոլոր իր բաժիններով, նա շատ շուտով, տրամաբանօրէն, կը զարգանայ և կը դառնայ լիակատար համալսարան իր բոլոր բաժիններով, որովհետև երկրի և պետութեան շահերը թելադրում են այդ անդրդուելի հետևողութեամբ։

Կովկասեան համալսարանի առաջ սփռված է հրաշալի հեռանկար մի այնպիսի տեղական գիտական գործունէութեան, որպիսին դժուար հաւանելի է կայսրութեան միւս համալսարանների համար, որովհետև մեր երկրի բնութիւնը, պատմական ժառանգութիւնները և կեանքի արտադրող նոր հարցադրումները բացում են անսպառ նիւթեր ընորոշ, առանձնայատուկ և միևնոյն ժամանակ խոր արդիւնաւէտ գործունէութեան համար։

Արդարև, պետութեան ոչ մի ուրիշ մասը պարունակում է իր մէջ այնպիսի բազմատարվված դրամարկղին, որի առիթով և ընտրվեց մի մասնախումբ վարչութեան անդամներից, հետևեալ ժողովին ներկայացնելու պատրաստի ծրագիր։ Որովհետև դրասենեկապետի պաշտօնով վարձված Դօլիձէի հեռանալուց յետոյ այդ տեղը բաց է մնում և հերթական գործերը անկատար, ուստի նախագահի առաջարկութեան համաձայն, վարչութեան անդամները ամենայն ուրախութեամբ յանձն առան ամենայն օր, մինչև պաշտօնեայ գտնելը, գալ գրասենեակ և որոշ ժամերին հերթապահութեամբ ընթացք տալ հերթական գործերին։ Վարչութեան հերթական ժողովները այսուհետև, համաձայն նոր վարչութեան որոշման, փոխանակ երկուշաբթի, տեղի կունենան շաբաթ երեկոները, նոյն տեղը՝ Կայս. Կովկ. Գիւղատնտես. Ընկ. շինութեան մէջ։ Գործին նուիրվելու այն սէրը և եռանդը, որ ցոյց տուին ժողովականները այդ ժողովում, եթէ այդպէս շարունակվելու լինի, յոյս կայ, որ ժողովրդական Համալսարանի գործը, որ ներկայումս գտնվում է աննախանձելի դրութեան մէջ, կը հասնի իր կոչման բարձրութեան։

Բ. Մ.

ԵԿ. ԳԱԲԱՇՎԻԼԻԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Կիրակի, մայիսի 1-ին, երեկոյեան, Վրաց թատրոնում մեծ շքով և հանդիսաւորութեամբ տօնվեց վրաց տաղանդաւոր կինոգրող Եկ. Ըէվազի դուստր Գաբաշվիլիի գրական-հասարակական գործունէութեան 40-ամեայ յօբելեանը։

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր հասարակութեան այլևայլ դասակարգերին պատկանող մարդկանցով։ Երեկոյեան ժամը 9-ից սկսվեց տօնակատարութիւնը, Ն. Լօմաուրիի դասախօսութեամբ, որով նա ընդորոշեց Եկ. Գաբաշվիլիին որպէս վրաց առաջին կինոգրող և տաղանդաւոր պատկերացնող ժողովրդական կեանքի, մանաւանդ իբրև գեղեցիկ նկարագրող վրացի գիւղացիութեան կենցաղի։ Դասախօսը տուեց նաև յօբելեարուհու հակիրճ կենսագրութիւնը, որից յետոյ ներկայացվեց Եկ. Գաբաշվիլիի «Փոփոխակի բաղդ» դրաման, վրաց դերասանական խմբի կողմից, որը շատ կենդանի կերպով խաղացվեց։

Ներկայացումից յետոյ Ս. Մգալոբլիշվիլին և Գր. Դիասամիձէն կարդացին յօբելեարուհու աշխատասիրութիւններից մի քանի կտորներ։ Նախ քան յօբելեանական հանդիսի սկսվելը՝ վրացի երգչների խումբը երգեց մի քանի ազգային և ժողովրդական երգեր։

Երգիչները հագած ունէին ազգային տարազ։

Գիշերվայ ժամը 11-ի մօտ՝ սկսվեց յօբելեանական հանդէսը և վարագոյրը բացվածին պէս՝ ծերունի տաղանդաւոր բանաստեղծ Ակակի Ծերեթէլիի ուղեկցութեամբ և թեանցուկ բեմ դուրս եկաւ ալեզարդ յօբելեարուհին։ Ծայրէ ի ծայր լի թատրոնը իբրև մի մարդ երկար ծափահարութիւններով և ցնծալից «վաշաներով» (կեցցէ) ընդունվեց տաղանդաւոր կնոջ՝ բեմի վրա երևալը։

Եկ. Գաբաշվիլիին բաղմեցնելով բազկաթոռի վրա՝ Ակ. Ծերեթէլին խորապէս զգացված խօսքերով շնորհաւորեց յօբելեարուհուն նրա կեանքի այս մեծ օրը, մի քանի խօսքերով բացատրեց հասարակութեանը Եկ. Գաբաշվիլիի կատարած կարևոր դերը և, բուռն ծափերի ներքոյ վերջացնելով իր խօսքը, հանդէսը բացված յայտարարեց, որից յետոյ հերթով առաջ գալով Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան ներկայացուցիչները, Վրաց Ազնուականութեան Թիֆլիսի պատգամաւորները, իսկ ապա «Մշակի» և «Արօրի» խմբագրութիւնների ներկայացուցիչները՝ Համբարձում Առաքելեանն և Յար. Դասպարեանը շնորհաւորեցին տաղանդաւոր կնոջ յօբելեանը։ Յար. Դասպարեանը վրացերէն լեզուով արտասանեց հետևեալ բարեմաղթութիւնները.

«Մեծարելի յօբելեարուհի,

«Հայ մամուլի աւագագոյն օրգան ամենօրեայ «Մշակ» լրագրի և «Արօր» ամսագրի խմբագրութիւնների կողմից, մենք, այսինքն հրապարակախօս Համբարձում Առաքելեանը և ես՝ բերելով ձեզ մեր ամենաջերմ ողջոյնները ձեր մայրենի վրաց լեզուով, համաձայն ցանկութեան Հ. Առաքելեանի, որը ինձ յանձնարարեց արտայայտելու երկու խմբագրութիւնների բարեմաղթութիւնները մեզ համար սիրելի վրաց լեզուով, գալիս ենք մաղթելու ձեզ դեռ երկար, երկար տարիների բեղմնաւոր կեանք յօգուտ մեր սիրելի եղբայրական վրաց ժողովրդի և նրա գրականութեան։ Վաշա Եկատերինէ Գաբաշվիլիս (կեցցէ Եկ. Գաբաշվիլին)»։

Որպէս պատասխան անկեղծ սրտից բղխած այս բարեմաղթութիւնների, ամբողջ թատրոնը դղրդաց բուռն ծափերից։

Սրանից յետոյ հերթով առաջ եկան վրաց այլևայլ հասարակական, կուլտուրական, դպրոցական և բարեգործական հաստատութիւնների պատգամաւորութիւնները, որոնք կարդացին ուղերձներ և արտասանեցին շնորհաւորական ճառեր։

Յօբելեանը առհասարակ վերին աստիճանի մտերմական և անկեղծ ընոյթ էր կրում։

Յօբելեարուհին ստացաւ բազմաթիւ ծաղկեայ փնջեր և պսակներ ու թանգարժէք իրեր։

Գիշերվայ ժամը 12-ին ստացված բազմաթիւ հեռագիրներից մի քանիսի ընթերցումից յետոյ՝ վերջացաւ յօբելեանական այս փառաւոր հանդէսը, և ամենքը զոհ տպաւորութիւնների տակ ցրվեցին, տանելով իրանց հետ քաղցր յիշողութիւններ։ Մէջ ընդ մէջ երգում էր վրացի երիտասարդներից բաղկացած բազմաձայն խումբը ազգային և ժողովրդական երգեր։

Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մեր բանուոր ազակներուն վարը

Փոթի, 23 ապրիլի

3 տարի է ինչ տեղումս գոյութիւն ունի «լուսաւորութիւն տարածող մի ընկերութիւն»։ Խօսել վերոդրեալ ընկերութեան արժանիքների մասին միանգամայն աւելորդ է, որովհետև մեր նպատակը այդ չէ։

Այս տարի յունվարին վերոյիշեալ ընկերութեան նախաձեռնութեամբ բացվեց և հայոց լեզուի դասընթացք, որի ծախքերի և զանազան անհրաժեշտութիւնների հոգատարութիւնը յանձն առաւ ընկերութիւնը։

Հայոց ծիսական ուսումնարանի հոգաբարձութիւնը անտարբեր չը գտնվեց այդ գործում և պէտք եղած աջակցութիւնը չը խնայեց. օրինակ՝ առարկաներ դասաւանդելու պատրաստակամութիւն յայտնեցին ծիսական դպրոցի ուսուցիչն ու ուսուցչուհին, բացի այդ երկուսից նաև հոգաբարձութեան անդամ Քագաբեանը։ Սկզբում դասընթացքներին յաճախում էին մօտաւորապէս 60—65 բանուոր, բայց հետզհետէ մի ինչ-որ «աներևոյթ ոյժի» դրդմամբ սկսեց պակասել և այժմ հազիւ 4—5 բանուոր են յաճախում, այն էլ մարդաէր անձանց յորդորով։ Պէտք է ասել, որ այս հանգամանքը սպառնում է դասընթացքներին փակումն, եթէ զեկուցվի պատշաճաւոր մարմնին այս մասին։

Բանուորները իրանց միջնադարեան հասկացողութեամբ պիտի փակել տան այն տաճարի դռները, որից գիտութիւն և լուսաւորութիւն ստանալու անչափ կարօտ ու ծարաւ են։

Զարմանալի է. ուսման վարձ չը կայ, ամեն ինչը ձրի է բացի տետրակներից և գրքերից, որոնց գներն աննշան են. այնուամենայնիւ վարանում են յաճախել դասընթացքներին. «Շատ կարդացողը սատանայ կը դառնայ և նրա հոգուն փրկութիւն չը կայ»—ասում են բանուորներից մի քանիսը։ Անկասկած, այս անդրջրհեղեղան տարաձիգիան է կաշկանդել նրանց ուղեղը։

Իսկ ոմանք պատճառաբանում են, թէ ձանձրացել են դասերից (?)։

Ցանկալի է հասկանալ, թէ արդեօք չէն ծանօթանում վաղ առաւօտից մինչև ուշ երեկոյ նարդի, դօմինօ և թուղթ խաղալուց, ուր շայլում են առանց ափսոսալու՝ դժոխային աշխատանքից արիւն-քրտինքով վաստակած իրանց սև կօպէկները և պակաս էլ գնում են դրախաններում լրացնելու։ «Բանուոր աշակերտների» բազմազան քէֆերի սեղանը բացեց նոր եկած ցիրկը, որ խսկոյն բուն դրեց մեզանում։

Վերջապէս, Երբ պիտի սթափվեն նախապատմական քնից և կամ Երբ պիտի ազատվեն խաւարի թագաւորութեան զօրեղ ու ճնշող ճիրաններից։

Մխիթար

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Հարցապնդում Երեխայ Իւշչինսկիի ապանութեան մասին

Պետերբուրգ, 29 ապրիլի

Նախագահում է Բօրզնանկօն։

Կարդացվում է աջակողմեանների հարցապնդումը ներքին գործերի և արդարադատութեան մինիստրներին այն մասին, թէ յայտնի է, արդեօք, նրանց, որ Ռուսաստանում գոյութիւն ունի հրէաների մի յանցաւոր աղանդ, որ իր մի քանի կրօնական ծիսակատարութիւնների համար զոհ է ածում քրիստոնէական արիւն. այդ աղանդի անդամները, լրագիրների տեսով, մարտին Կիէվում չարչարել են երեխայ Իւշչինսկիին։ Արդ՝ ինչպիսի միջոցներ են ձեռք առնվում այդ աղանդի գոյութիւնը և նրա գործունէութիւնը դադարեցնելու, ինչպէս և երեան հանելու նրանց, որոնք մասնակցել են չարչարելու գործողութիւնների և փոքրիկ Իւշչինսկիի սպանութեան մէջ։

Հարցապնդումը ճանաչված է շտապողական։

Արդարադատութեան մինիստրութեան 1-ին տեսանի կառավարիչը մինիստրի յանձնարարութեամբ յայտնում է, թէ Իւշչինսկիի սպանութեան իսկական ճշմարտութիւնը պարզելու համար ձեռք են առնվում ամեն տեսակ միջոցներ, քննութիւնը կատարվում է կարևոր գործերի քննիչ Փենկոյի ձեռքով։ Տեղեկութիւն առնելուց անմիջապէս յետոյ՝ արդարադատութեան մինիստրը հեռագրով յանձնարարեց Կիէվի դատաստանական պալատի դատախազին անձամբ հսկել գործի ընթացքի վրա։ Վերջապէս, մինիստրը ներքին գործերի մինիստրութեան համաձայնութեամբ առանձին կարգադրութիւն է արել՝ ձեռնարկելու որոնման ամենակտրուկ գործողութիւնները։

Պուրիշկեվիչը իբրև առաջինը ստորագրած յիշեցնում է, որ հրէական ընակութեան շրջանում միապետական կազմակերպութիւններ երեան գալու ժամանակից չէ եղել և ոչ մի չարդ, որովհետև միապետական կազմակերպութիւնները կռիւ են մղում հրէական տղայասպան սովորութիւնների դէմ կուլտուրական, մտաւորական, տնտեսական միջոցներով, և ոչ բռունցքով։ «Բայց եթէ բարձրագոյն շնորհված դումայական հնարաւորութիւն չի տայ պարզելու զուրթիւնը ծիսական մարդասպանութիւնների գործում, այն ժամանակ յանդիմանինքներդ ձեզ։ Հարցապնդման նախաձեռները չեն մեղադրում հանուր հրէութիւնը, բայց բուռն կերպով ուզում են իմանալ գոյութիւն ունի, արդեօք, հրէութեան մէջ այնպիսի աղանդ, որ դաւանում է բեալ սպանութիւններ։ Այդօրինակ գոյութեան մասին ապացոյցներ կան թիւն իշխան Գոլիցինի կատարած քննութեան մէջ»։

Շուբինսկին հոկտեմբերեանների անխօսում է շտապողականութեան դէմ։ մայի ամբիոնից վաղուց է յայտարարվում թէ Դուման լռում է, երբ գործը գտնվում դատական իշխանութեան ձեռքում։ ցայտնդումը ինքնին չքանում է իշխանութեան ներկայացուցչի ազդարարությունը յետոյ։ Սակայն հարցապնդման հեղինակները, չունենալով հանդերձ իրական փաստեր և առաջնորդվելով սոսկ երևակայութիւնով, աշխատում են Դումայի ամբիոնը դարձնել հրէատեացութեան տենդէնցիոզ ագիտացիայի ասպարէզ (ծափահարութիւն ձախից)։

Նեսելօվիչը ասում է, որ հրէական ծիսական-սպանութիւնների մէջ մեղադրանքը ոչ միայն անմիտ բան է, այլ և ամենաիւրաքանչիւր քրիստոնեայի համար, որ լաւ գիտէ, թէ և՛ Սուրբ Գիրքը, և՛ յունական մեկնութիւնները և կանոնագրքերը գալում են հրէաներին ընդունել նոյնիսկ ձուն, որի մէջ կը լինի թեկուզ մի կաթիլ։ Ընդունելով հարցապնդումը առասպել, տարօրինակ ապացուցում է, որ հարցապնդողները հեղինակների մեկ ցանկութիւնն է տալիս առաջ բերել նորանոր հրէական գրքեր։ (Ծափահարութիւն ձախից, սուլոց աջից)։

Բոգդանովիչը խօսում է ոչ միայն շտապողականութեան, այլ և հարցապնդման դէմ։ Նա կարծում է, որ սոսկ հակասեմիտական հանրութիւնը կարող է թելադրել այդպիսի հարցապնդումներ, յիշեցնում է թէ հոսանքներ պատմաբանները վկայում են, որ առաջ սպանութիւնների մեղադրանքները բղխում էին դեռ առաջին դարերի քրիստոնեաներից։ Դումայի արժանապատվութիւնից ցածր է քննել այն, ինչ որ 5 դար առաջ համարվում էր նախապաշարում։ Անթոյլատրելի է, որպէսզի ռուս կուլտուրական հասարակութեան մէջ այդ ամենամեղադրանքները կրկնվեն որևէ մէկի բանով, բացի նրանցից, որոնք մարդասիրութեան վարդապետութիւնը դարձրին իրանց շահաւէտ արհեստը։ (Ծափահարութիւն ձախից)։

Մարկով 2-րդ ջանում է ապացուցանել հրէաների մէջ երեխաներին տանջելու նրանցից արիւն քամելու սովորութիւն կ

Զայնաուութեան պատճառների առիթով Փրիդմանը դէմ է շտապողականութեան։ Գեգեչկօրին կողմնակից է շտապողականութեան։ Գեգեչկօրին ասում է, որ երեխակողմեանները հարցապնդում էին ժողովրդի միութեան մասին, որը, հանդիսանալով կարծիքով, մարդասպանների և կողոպտիչների օջախ է... (ուժեղ աղմուկ աջից, բացականչութիւններ՝ «դուրս կորի՛ր»։ Նախագահը զանգահարում է. բռունցքազարկիր)։

Գեգեչկօրին շարունակում. «...Այն ժամանակ կառավարութիւնը պատասխան տուեց»։ Հռետորը իր ճառը վերջացնելիս է աջից շարունակվող աղմուկի մէջ։ Նախագահը հրաւիրում է հռետորին կարգի անց է, չը խօսելով բազմաթիւ բարբառների մասին *)։

Այդ լեզուների մի մասը ուսումնասիրված է, բայց աւելի մեծագոյնը սպասում է ուսումնասիրութեան։

Եւ ահա ուսումնասիրութիւնների, ընդարձակ ասպարէզ ազգագրագէտի, լեզուագէտի, բանասէրի, ուսումնասիրութիւնների՝ որոնք պէտք է ունենան ոչ միայն տեսական, այլ և գործնական նշանակութիւն մանկավարժական և կենցաղավարական տեսակէտով։

Աւելացրէք դրանց երկրի հնագիտութեան և պատմութեան ուսումնասիրութիւնը, որը պէտք է լոյս սփռի երկրի կենցաղագիտական առանձնայատկութիւններից շատերի վրա, կովկասեան ազգութիւնների իրաւական հասկացողութիւնների ընտանութեան վրա, գեղարուեստական-ստեղծագործական ժառանգութիւն մնացած ստեղծագործութիւնների ընոյթի վրա, երկրի և նրա մէջ երկար դարեր ապրող ժողովուրդների պատմական ճակատագրի առանձնայատկութիւնների վրա։

Եւ ահա ձեր առաջ նոր հօրիզօններ խորհետաքրքրական ուսումնասիրութիւնների և եզրակացութիւնների համար։

IV

Անդրկովկասը, որ հնագոյն դարերում ծառայում էր իբրև հաղորդակցութեան ուղի Արևելքի և Արևմուտքի, Ասիայի և Եւրոպայի միջև, նորից սկսում է նուաճել զանութիւն երկրի կերտուածքում և ի ցոյց է հարում միաժամանակ կլիմայի, բուսականութեան և կենդանաբանութեան բոլոր գօտիները, սկսած տաք հարաւին յատուկ արդիւնաբերութիւնից մինչև բևեռային երկիրների ազքատ բուսականութիւնը, չոր անապատներից և լերկ ժայռերից մինչև ջրաբուի հովիտների շքեղ այգիները և սեւ-ծովափեան հրաշագեղ ծաղկաստանները։

Միլիօնաւոր դեսեատին հողեր զանազան բարձրութիւնների վրա, սկսած 0 աստիճանից մինչև կովկասեան լեռնահսկաների ձիւնները, հանդէս են բերում ընդարձակ դիտողութիւնների ասպարէզ լեռնային գօտիների ուսումնասիրութեան վերաբերութեամբ և դարձնում են մեր բոլոր երկիրը մի անագին փորձնական կայարան, բուսաբանութեան և կենդանաբանութեան հսկայական այգիներ։

Բնագէտը անսպառ աղբիւրներ կը գտնէ գոգական աշխատանքների կազմակերպութեան համար։ Երկրաբանը, հանքաբանը, հողագէտը, բուսաբանը, կենդանաբանը տասնեակ տարիների գիտական ուսումնասիրութիւնների համար ունեն կուսական հող այդտեղ։

III

Իսկ ազգագրական և լեզուագիտական տարրերը մեր երկրում։

Նայեցէք, ինչպիսի բազմազանութիւն, որից գերազանցը չը կայ երկրագնդի ուրիշ մի անկիւնում։

Կովկասը ազգագրական մի կենդանի թանգարան է։ Որքան ազգեր և պատմական շերտաւորումներ են մնացել այս երկրում։

Եթէ վերցնենք միայն ինքնուրոյն լեզուների թիւը, կը տեսնենք, որ նա քսանհինգ կերուութիւն երկրի կերտուածքում և ի ցոյց է հարում միաժամանակ կլիմայի, բուսականութեան և կենդանաբանութեան բոլոր գօտիները, սկսած տաք հարաւին յատուկ արդիւնաբերութիւնից մինչև բևեռային երկիրների ազքատ բուսականութիւնը, չոր անապատներից և լերկ ժայռերից մինչև ջրաբուի հովիտների շքեղ այգիները և սեւ-ծովափեան հրաշագեղ ծաղկաստանները։

Միլիօնաւոր դեսեատին հողեր զանազան բարձրութիւնների վրա, սկսած 0 աստիճանից մինչև կովկասեան լեռնահսկաների ձիւնները, հանդէս են բերում ընդարձակ դիտողութիւնների ասպարէզ լեռնային գօտիների ուսումնասիրութեան վերաբերութեամբ և դարձնում են մեր բոլոր երկիրը մի անագին փորձնական կայարան, բուսաբանութեան և կենդանաբանութեան հսկայական այգիներ։

Բնագէտը անսպառ աղբիւրներ կը գտնէ գոգական աշխատանքների կազմակերպութեան համար։ Երկրաբանը, հանքաբանը, հողագէտը, բուսաբանը, կենդանաբանը տասնեակ տարիների գիտական ուսումնասիրութիւնների համար ունեն կուսական հող այդտեղ։

III

Իսկ ազգագրական և լեզուագիտական տարրերը մեր երկրում։

Նայեցէք, ինչպիսի բազմազանութիւն, որից գերազանցը չը կայ երկրագնդի ուրիշ մի անկիւնում։

Կովկասը ազգագրական մի կենդանի թանգարան է։ Որքան ազգեր և պատմական շերտաւորումներ են մնացել այս երկրում։

Եթէ վերցնենք միայն ինքնուրոյն լեզուների թիւը, կը տեսնենք, որ նա քսանհինգ

*) Յիշատակենք լեզուները՝ հայ, վրացերէն, թուրք, օսերէն, ուդիերէն, ասարի, մեցի, խինալուգի, նեկաի, բօթլիխի, չեչեն, չերքեզի, աբազի, աբխազի, ավանի, ճանի, ֆարսի, թաթի, քիւրդի, ասորի, յոյն, հրէական, բօշայական, զամուսի, նօղայի և յետոյ տասնինգերորդ դարում երևացած ռուսական, գերմանական, մորդվինական, էստական և այլն։

իր նախկին դիրքն ու նշանակութիւնը անհերքելի է, որ երկաթուղային գծերի նոր ցանցերը ոչ միայն կը վերակենդանացնեն այդ երկրի հաղորդակցութեան միջոցները, այլ և կը դարձնեն Անդրկովկասը հանգոյցային մի կէտ, որին ճակված է խաղալ էական կուլտուրական դեր։

Եթէ մեզ բոլորիս համար կարևոր թանգ է, որ Անդրկովկասը, իբրև տութեան առաջնորդ կայան, զօրութիւն կատարելու պատկան թելադրած նպատակները, եթէ մենք բոլորս ցանկանում ենք, որ Անդրկովկասը յաղթող հանդիսանայ տնտեսական զանցութեամբ և խոշոր մաս ունենայ մի ազգային հաղորդակցութեան գործում մենք բնականաբար և տրամաբանօրէն պէտք է ձգտենք բարձրացնել Անդրկովկասը մտաւորապէս և տնտեսապէս, մենք պէտք է ծածկենք Անդրկովկասը այն բոլոր կրթական և կուլտուրական հաստատութիւններով, որոնք անհրաժեշտ են երկրի կուլտուրական գործունէութիւնը մեծացնելու և ուժեղացնելու համար։ Իսկ այդ հաստատութիւնների շարքում առաջնակարգ տեղերից մէկն է բռնում բարձրագոյն դպրոցը, որը կը տայ երկրին գիտութիւն և ձեռնհաս գործողներ՝ իրագործելու ծրագրված նպատակները։

Այստեղ կարևոր է արձանագրել և հետևել հանգամանքը, որը ապացուցանում է համալսարանի հիմնարկութեան նպատակայարմարութիւնը։ Անդրկովկասում, Անդրկովկասի կուլտուրական առաջադիմութեան ստորին մակերևոյթը չափազանց վայր է ժ ձգում նրա նշանակութիւնը։ Առաջաւոր Ա

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

